

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ ԼԻԼԻԹ ԳԱԳԻԿԻ

**ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ**

**ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Գ.Վ. ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Ի.Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Ա.Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ.Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. նոյեմբերի 7-ին ժամը 14.00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՂ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2013թ. հոկտեմբերի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝



Ս.Ղ. ՍՎԱԶՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում ավելի հաճախ է պահանջվում տարբեր բնագավառների գիտնականների ջանքերի միավորումը կրթության տեսության և պրակտիկայի առջև ծառայած բարդ խնդիրների լուծման համար: Հենց այդ առումով էլ չափազանց կարևոր է, որ կրթական գործընթացի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր սուբյեկտ հստակ պատկերացնի իր առարկայի դասավանդման առանձնահատկությունները, տեխնոլոգիաները և որոշի իր տեղն ու դերը մանկավարժական գործընթացում:

Կրթության արդյունքի նոր հարացույցի ձևավորումը, նպատակների և խնդիրների փոփոխությունը կոչված են ապահովելու մարդու մուտքը սոցիալական աշխարհ, նրա սոցիալական մրցունակությունը և մասնագիտական, արդյունավետ գործունեությունը, որն էլ իր հերթին նոր պահանջներ է ներկայացնում մանկավարժերին տիրապետելու մասնագիտական, հաղորդակցական, առարկայական կոմպետենցիաներին, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու մասնագիտական գործունեությանը:

Կրթական բարեփոխումների համատեքստում առաջատար խնդիր է համարվում ուսուցչի մասնագիտական կրթության որակի բարձրացումը, ուսուցիչ, ով արագ կհարմարվի նորանուծություններին և նորարարություններին և դրա հիման վրա ստեղծագործաբար կկատարելագործի ուսումնադաստիարակչական գործընթացը՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և հասարակության կրթական պահանջումներին:

Ուսուցչի պրոֆեսիոնալիզմի մակարդակի նկատմամբ այսօրինակ պահանջները ենթադրում են մանկավարժական բուհում մասնագիտական պրակտիկայի բովանդակության և տեխնոլոգիայի կատարելագործում, դպրոցում ուսուցչի գործունեության կազմակերպման հոգեբանամանկավարժական և գիտամեթոդական կառուցվածքի որակական փոփոխություն, ինքնակրթության և ինքնազարգացման նախագծում և դրա իրացման պայմանների ապահովում: Այս համատեքստում ուսուցչի մասնագիտական կատարելագործումը չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում:

Այժմ ուսուցիչների մանկավարժական մասնագիտական գործունեության կատարելագործման հարցի վերաբերյալ կան մի շարք տեսական մոտեցումներ, որոնք հիմք են ծառայում նրանց կողմից դասավանդման արվեստի գիտական հիմունքների յուրացման և մասնագիտական կայացման համար (Գ.Ա. Բորոդովսկի, Վ.Ա. Սլաստենին, Ի.Ֆ.Իսաև, Վ.Ի. Սլոբոդչիկով, Ն.Ա. Շայդենկո և այլք):

Այս տեսանկյունից առաջնային է դառնում նաև մասնագիտական կրթության տեսության և մեթոդիկայի ուղղությամբ մանկավարժական այնպիսի հետազոտությունների կատարման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն սկսնակ ուսուցիչների մասնագիտական կայացմանը, մանկավարժական վարպետության ձևավորմանը, նրանց կողմից դասավանդման հիմունքների, ուսուցման սկզբունքների և օրինաչափությունների յուրացմանը, կրթական նոր տեխնոլոգիաների մշակման գործընթացին նրանց մասնակցությանը, որի շնորհիվ էապես կբարձրանա ուսման որակը:

Գաղտնիք չէ, որ սկսնակ ուսուցիչները շատ հաճախ են դիմում աշխատանքային մեծ փորձ ունեցող ուսուցիչներին մեթոդական օգնություն ստանալու համար: Սակայն այսօր պահանջվում է ոչ թե մենթորության միջոցով մեթոդական փորձի ուղղակի փոխանցում, այլ անհրաժեշտ կոմպետենցիաների յուրացում՝ հենվելով մարդակենտրոն կողմնորոշման վրա, որը կարող է իրականացվել միայն հետաուսումնական մանկավարժական կրթության ընթացքում:

Այնուհանդերձ մանկավարժագիտության մեջ տակավին ոչ լիարժեք են ուսումնասիրված դպրոցում ուսուցիչների մասնագիտական կատարելագործման մի շարք տեսանկյուններ՝

- ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման գիտամեթոդական, հոգեբանամանկավարժական և տեխնոլոգիական կողմերի ապահովման հիմնախնդիրը,
- ուսուցիչների ստեղծագործական ներուժի ակտիվացման, ինքնիրացման և ինքնագարգացման համար պայմանների ստեղծման հիմնախնդիրը:

Անշուշտ, նշված հիմնախնդիրների լուծման հաջողությունը պայամանավորված է բուհում ապագա ուսուցիչների պատրաստման և դպրոցում նրանց մասնագիտական կատարելագործման արդյունավետությամբ:

Սակայն, մեր կարծիքով, դպրոցի զարգացման կառավարման ապահովման համար հրատապ է դառնում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման այնպիսի տեխնոլոգիաների ներդրումը, որոնք հնարավորություն կտան բարձրացնելու ուսուցչի մասնագիտական գործունեության որակը և կատարելագործելու մանկավարժական վարպետությունը:

Մեր հետազոտության հիմնախնդրի մի շարք տեսանկյուններ դիտարկվել են Ն.Ս. Աստաֆևայի, Յու.Կ. Բաբանսկու, Ա.Պ. Բելյակայի, Վ.Պ. Բեսպալկոյի, Ա. Բոնդարևսկայայի, Ա.Պ. Վալիցկինի, Ա.Ս. Վերբիցկայայի, Ա.Ն. Լեոնտևի, Ն.Ֆ. Տալիզինայի, Լ.Թ. Ասատրյանի, Մ.Ս. Մանուկյանի, Ա.Ս. Մանուկյանի, Յ.Յ. Պետրոսյանի, Ժ.Ս. Թադևոսյանի, Ռ.Ե. Պետրոսյանի և այլոց հետազոտություններում:

Ուսուցչի մասնագիտական մանկավարժական գործունեության, մանկավարժական հաղորդակցման և պրոֆեսիոնալիզմի հիմնախնդիրը ուսումնա Ա.Կ. Մարկովայի, Լ.Վ. Միտինայի, Վ.Ա. Սլաստենինի, Ե.Ն. Շիյանովի, Ա.Ա. Բալյանի, Մ.Ս. Մանուկյանի, Ա.Ս. Մանուկյանի, Ժ.Ա. Թադևոսյանի, Ռ.Ե. Պետրոսյանի և այլոց կողմից:

Ամենևին չթերագնահատելով վերը նշված հետազոտողների արժեքավոր աշխատությունները և տեսական մոտեցումները՝ մենք կարծում ենք, որ կոմպետենտ մոտեցման և կրթական նոր հարացույցի տեսանկյունից ժամանակակից ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման և մասնագիտական կոմպետենցիաների զարգացման խնդիրները դեռևս լուրջ հետազոտության կարիք ունեն:

Մեր հետազոտության թեմայի ընտրությունը պայամանավորված է ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետության ապահովման արդի ժամանակաշրջանի հրամայականով :

Հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել և մշակել ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետությանը

նպաստող մանկավարժական տեխնոլոգիաներ:

Յետազոտության օբյեկտն ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման գործընթացն է:

Յետազոտության առարկան ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման մանկավարժական տեխնոլոգիաներն են:

Յետազոտության գիտական վարկածը մեր այն ենթադրությունն է, որ ներկայումս ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետությունը կբարձրանա, եթե՝

- բացահայտվեն սկսնակ ուսուցչի մասնագիտական գործունեության ոլորտում առկա թերությունները և նախանշվեն դրանց վերացման ուղիները,
- ուսուցիչների մասնագիտական գործունեության կատարելագործումն իրականացվի տեսական-հայեցակարգային մոտեցումների, հիմնադրույթների և համընդհանուր մտահաղորդակցական ձևերի կիրառման մեթոդաբանության վրա,
- մշակվեն և գործնականում կիրառվեն մանկավարժական այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն ուսուցիչների մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետությունը,
- ապահովվի դպրոցի կառավարման սուբյեկտների համագործակցությունը, որը հիմք կդառնա ուսուցչի մասնագիտական կայացման և ստեղծագործական անհատականության ձևավորման համար,
- կրթական հաստատությունում նախագծվեն և ներդրվեն ուսուցչի մասնագիտական կայացմանը և մանկավարժական գործունեության կատարելագործմանն ուղղված գիտամեթոդական ուղեցույցներ և ուսուցչի մտամարզման և մասնագետ-խորհրդատուի հետ համագործակցության տեխնոլոգիաներ:

Յետազոտության խնդիրներն են՝

1. իրականացնել հետազոտության հիմնախնդրի վերլուծություն, որոշել նրա մշակվածության աստիճանը մանկավարժության տեսության մեջ և ժամանակակից կրթական պրակտիկայում,
2. բացահայտել ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման գործընթացում առկա թերություններն ու բացթողումները,
3. ճշգրտել ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման էությունը և չափանիշները,
4. մշակել դպրոցում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետությունը ապահովող մանկավարժական տեխնոլոգիաներ,
5. գիտափորձով ստուգել ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործմանն ուղղված տեխնոլոգիաների արդյունավետությունը,
6. մշակել մեթոդական համաձայնարարականներ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել գործունեության տեսությունը, կրթության փիլիսոփայության դրույթները, ուսուցչի մասնագիտական պատրաստության և մասնագիտական գործունեության կատարելագործման վերաբերյալ դասական և ժամանակակից հետազոտությունները, հատկապես ուսուցչին ներկայացվող՝ Ի.Ֆ. Իսակի, Ա.Ի. Միշչենկոյի, Վ.Ա. Սլաստենինի, Ա.Ա. Վերբիցկու, Յու.Ա. Կոնարժևսկու, Ա.Մ. Պոտաշնիկի, Պ.Ի. Տրետյակովի, Տ.Ի. Շամոլայի, Մ.Գ. Աստվածատրյանի, Ա.Տ. Վարդունյանի, Զ.Զ. Պետրոսյանի, Մ.Մ. Մանուկյանի, Ա.Մ. Մանուկյանի, Ռ.Ե. Պետրոսյանի, Ժ.Ս. Թադևոսյանի և այլոց կողմից մշակված մասնագիտական պահանջները, ուսուցչի մասնագիտական կայացման, մանկավարժական կոմպետենցիաների ձևավորման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները: Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել նաև կրթական գործընթացի կատարելագործման, ինչպես նաև մասնագիտական-կրթական գործունեության վերաբերյալ անձնային մոտեցման դրույթները (Է.Ֆ. Ջեյեր, Գ.Մ. Ռոմանցև, Օ.Ն. Շախմատովա), մանկավարժական և կառավարչական մշտադիտարկման կազմակերպման վերաբերյալ դրույթները (Վ.Գ. Գորբ, Լ.Դ. Նազարովա, Ա.Ա. Օրլովա), կրթական համակարգերի կառավարման ընդհանուր գիտական տեսանկյունները (Ա.Ա. Գլխմանով, Ն.Ի. Կաբուլչիկ, Ա.Ն. Մայրով, Մ.Մ. Պոտաշնիկ, Ա.Ա. Ղուկասյան, Լ.Թ. Ասատրյան, Մ.Ա. Ասատրյան, Ա.Ա. Կարապետյան և այլք), ինչպես նաև կրթության կառավարման հոգեբանության բնագավառի հետազոտությունները:

Ատենախոսության առաջադիր խնդիրների լուծման և գիտական վարկածի հաստատման նպատակով կիրառվել են **գիտահետազոտական մեթոդներ`**

1. տեսական վերլուծության և համադրման մեթոդներ, որոնց շնորհիվ բացահայտվել են հետազոտության հիմնախնդրին վերաբերող փիլիսոփայական, մանկավարժական, հոգեբանական հայեցակարգերը,
2. ենթիրիկ հետազոտության մեթոդներ` դիտում, զրույց (անհատական, խմբային), անկետավորում, ուսուցիչների գործունեության արդյունքների վերլուծություն,
3. մանկավարժական գիտափորձ:

Հետազոտության բազա են հանդիսացել Վանաձոր քաղաքի թիվ 5, 18, 24, Լոռու մարզի Լեռնանցքի, Դեբեդի, Գարգառի միջնակարգ դպրոցները: Հետազոտության մեջ ներգրավվել են 117 ուսուցիչներ, 3 վերապատրաստողներ:

Հետազոտությունն անցկացվել է երեք փուլով:

Հետազոտության **առաջին փուլում** (2002-2007թթ.) ուսումնասիրվել են ուսուցիչների անձնային և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների, մասնագիտական զարգացման վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական գրականությունը: Բացահայտվել են ուսուցչի մասնագիտական գործունեությանը վերաբերող դիդակտիկական, կառավարչական սկզբունքները, համամանկավարժական պահանջները և մանկավարժական տեխնոլոգիաները: Մշակվել են մանկավարժական գիտափորձի անցկացման ծրագիրը, ընթացակարգը, փուլերի հաջորդականությունը, ձևավորվել են գիտափորձի մասնակիցների ստուգողական և փորձարարական խմբերը, իրականացվել է գիտափորձի հաստատող փուլը:

Երկրորդ փուլում (2007-2010թթ.) որոշվել են ուսուցչի մասնագիտական գործունեության կառուցվածքային բաղադրատարրերը, կատարելագործման սկզբունքները, մասնագիտական կայացման մակարդակների գնահատման չափանիշները, իրականացվել են փորձարարական աշխատանքներ. փորձարկման են դրվել մշակված տեխնոլոգիաները, անց է կացվել ձևավորող գիտափորձ:

Երրորդ փուլում (2010-2011թթ.) անցկացված հետազոտության և փորձարարական աշխատանքների արդյունքների հիման վրա կատարվել են վարկածի փորձարարական ստուգում, հետազոտության նյութերի համակարգում: Ձևակերպվել են հիմնական դրույթները, եզրակացություններ ու գիտագործնական հանձնարարականները:

Հետազոտության **գիտական նորույթը`**

- բացահայտվել են այն գործոնները, միջոցներն ու ձևերը, որոնք նպաստում են դպրոցում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործմանը,
- մշակվել են ուսուցչի մասնագիտական մանկավարժական գործունեության կատարելագործման տեխնոլոգիաներ, որոնք ներառում են ուսուցչի մտամարզման միջոցները, ձևերը, մեթոդները, ընթացակարգը, մասնագետ-խորհրդատուի հետ համագործակցության էական բնութագրերը և տեխնոլոգիական քայլերը,
- մշակվել են թեստեր, խնդիր-իրավիճակներ, որոնք կարող են կիրառվել դպրոցներում ուսուցչի մասնագիտական կայացման և մանկավարժական գործունեության կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքներում:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- բազմագործոն հոգեբանամանկավարժական վերլուծության է ենթարկվել քննարկվող հիմնախնդիրը,
- ընդլայնվել են ուսուցչի մասնագիտական կատարելագործման տարբերակված ձևերի, բովանդակության և տեխնոլոգիաների վերաբերյալ գիտատեսական պատկերացումները,
- տեսականորեն հիմնավորվել է ժամանակակից դպրոցում ուսուցչի մասնագիտական մանկավարժական գործունեության կատարելագործման տեխնոլոգիական համալիրը,
- մանկավարժության տեսության մեջ համակողմանիորեն դիտարկվել է ուսուցչի մասնագիտական զարգացման և մանկավարժական գործունեության կատարելագործման հիմնախնդիրը:

Հետազոտության գործնական նշանակությունը հիմնավորվում է`

- հետազոտության արդյունքների` հանրակրթական դպրոցներում և ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում օգտագործման հնարավորությամբ,
- դպրոցներում ուսուցչի մասնագիտական կայացման և մանկավարժական գործունեության կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքներում մշակված թեստերի, խնդիր-իրավիճակների, գործնական առաջադրանքների ներդրմամբ:

Պաշտպանության եւ ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Վերջին տարիներին հանրակրթության համակարգում ընթացող բարեփոխումները պահանջում են դպրոցում ուսուցիչների մասնագիտական կայացման և մանկավարժական գործունեության կատարելագործման, ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների և փորձի հարստացման, սոցիալական համագործակցության նոր տեխնոլոգիաների մշակում և ներդրում դպրոցի պրակտիկայում,
2. ուսուցչի մասնագիտական մանկավարժական գործունեության կատարելագործման հիմնախնդրի տեսական մեթոդաբանական հիմնավորումը՝ կոմպետենտային մոտեցման տեսանկյունից հնարավորություն կտա դպրոցի կառավարման սուբյեկտներին համապատասխան մասնագիտական միջավայր ստեղծելու և նպաստելու ուսուցիչների ստեղծագործական անհատականության և ինքնառեքստիվի կարողությունների, մասնագիտական, հաղորդակցական, առարկայական կոմպետենցիաների զարգացմանը,
3. հանրակրթական դպրոցի ուսուցիչների մասնագիտական մանկավարժական գործունեության կատարելագործման տեխնոլոգիաները՝
 - ա) ուսուցչի մտամարզման տեխնոլոգիան, որը զարգացնում է նրա մանկավարժական մտածողությունը, մանկավարժական տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և ճիշտ որոշում կայացնելու կարողությունները, հարստացնում մասնագիտական գիտելիքները,
 - բ) մասնագետ-խորհրդատուի հետ համագործակցության տեխնոլոգիան, որը նպաստում է ուսուցչի մեթոդական գործունեության կատարելագործմանը և մասնագիտական կայացմանը, նրա մանկավարժական իմիջի ձևավորմանը,
4. ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվող մեթոդական աշխատանքները՝ դասալսումները, կրթական գործընթացի տարբեր ռազմավարությունների նախագծման և մշակման աշխատանքները, սեմինար պարապմունքները, մանկավարժական մասնագիտական ստեղծագործական և հետազոտական աշխատանքների շնորհանդեսները, մանկավարժական ընթերցումները առաջավոր փորձի տարածման լավագույն միջոցներ են և կարող են ապահովել ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման գործընթացի արդյունավետությունը:

Չեզոքության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են գիտատեսական ու մեթոդաբանական հիմքով, հետազոտության ընդգրկում բազայով համալիր բնութթվ, փորձարկվողների լայն ընդգրկվածությամբ, գիտահետազոտական մեթոդների և մեթոդիկաների արդյունավետ կիրառմամբ, ատենախոսի անձնական մասնակցությամբ ու ներդրումով:

Չեզոքության փորձաքննությունը կատարվել է Խ.Աբովյանի անվան ԶՊՄԳ-ի ընդհանուր մանկավարժության ամբիոնում, Վանաձորի Զովի. Թունանյանի անվան մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ամբիոնում,

փորձարարական դպրոցներում, ՀՀ Կրթության ազգային ինստիտուտում, տպագրված հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Այն կազմում է համակարգչային 131 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության՝ «**Ուսուցչի մասնագիտական մանկավարժական գործունեության կատարելագործման հիմնախնդրի տեսական-մեթոդաբանական հիմքերը**» խորագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը» ենթագլխում հիմնավորվում է հիմնախնդրի մեթոդաբանական նշանակությունը: Նշվում է, որ ուսուցչի մասնագիտական, մեթոդական կատարելագործման հիմնախնդրի արմատները գնում են դեպի վաղնջական ժամանակները:

Դիտարկված են հիմնախնդրի վերաբերյալ հայ և արտերկրի մեծ մտածողների, մանկավարժ-գիտնականների, հոգեբանների տեսական մոտեցումները:

Ելելով ուսուցչի մասնագիտական զարգացման, ինքնակատարելագործման հոգեբանամանկավարժական տեսական դրույթներից և գիտական հիմնավորումներից՝ մենք ուսուցչի մանկավարժական գործունեության կատարելագործումը դիտարկում ենք որպես անընդհատ գործընթաց հետևյալ փուլերով.

- Դրդապատճառային-նպատակային: Այս փուլում ձևավորվում են ուսուցչի մանկավարժական գործունեություն իրականացնելու պահանջմունք և դրական դրդապատճառ, որոնք նրան մղում են համապատասխան արժեքների յուրացման, սուբյեկտային դիրքորոշման ապահովման, մանկավարժական գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման: Արդյունքը լինում է մանկավարժական գործունեության դրական դրդապատճառների ձևավորումը և մասնագիտական զարգացման անձնային իմաստ հաղորդելը:
- Մասնագիտական գործունեության կատարելագործման բովանդակության և համագործակցության ծրագրի մշակման փուլում իրականանում են մանկավարժական գործունեության հիմունքների, նորմերի, արժեքների յուրացումը: Արդյունքը մանկավարժական հաղորդակցման միջոցներին, դասի կառավարման սկզբունքներին, գործառույթներին տիրապետում է, ինքնառեֆլեքսիայի, ինքնագնահատման կարողությունների և կոմպետենցիաների ձևավորումը: Իմիջի մասնագիտական «Ես»-հայեցակարգի գիտակցման և յուրացման փուլում ընթանում է ուսուցչի մանկավարժական իմիջի դրդապատճառային, ճանաչողական, գործունային, հուզական, մանկավարժական մշակույթի և մասնագիտական «Ես-հայեցակարգի» ձևավորումը:
- Կազմակերպչական տեխնոլոգիական փուլում ընթանում են մանկավարժական գործունեության կատարելագործման նոր ձևերի ու

մեթոդների որոնում, գործունեության ռեֆլեքսիայի իրականացման կարողությունների, մանկավարժական կոմպետենցիաների ձևավորում:

- Գործունեության վերլուծության և արդյունքների գնահատման փուլ:

Արդյունքը մանկավարժական մասնագիտական գործունեության և մանկավարժական տեխնիկայի կատարելագործումն է, ուսուցչի մասնագիտական անհատականության ձևավորումը և կայացումը:

Այսինքն մենք մանկավարժական գործունեությունը համարում ենք ուսուցչի միասնականացված որակների և դրդապատճառային - նպատակային, մտածողական, գործունային, կազմակերպչական-տեխնոլոգիական, հուզական-գնահատող բաղադրիչների ամբողջություն:

Հիմնավորվում է, որ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների և ինովացիաների արդի պայմաններում ուսուցիչների մասնագիտական զարգացման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության կատարելագործման յուրահատկությունը պայմանավորված է ժամանակակից սոցիալ-մշակութային դինամիկ իրավիճակով, ուսուցչի մասնագիտական դիրքորոշմամբ և հասարակության զարգացման մեջ իր դերի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ:

Հիմք ունենալով այս յուրահատկությունը՝ կարելի է առանձնացնել ուսուցչի մասնագիտական դիրքորոշումները՝ ուսուցիչ-մասնագետ, ուսուցիչ-պրոֆեսիոնալ, ուսուցիչ-դաստիարակ:

Մասնագիտական դիրքորոշումները՝ որպես անհատական դինամիկ որակներ, ինտեգրում են ուսուցչի գիտակցական ուղղվածությունը, պրոֆեսիոնալ վարքը, անձնային և մասնագիտական արժեքները: Դրանք անմիջականորեն կապված են ուսուցչի անհատական մանկավարժական և մեթոդական մշակույթի զարգացման մակարդակի հետ և համարվում են նրա մանկավարժական արդյունավետ գործունեության գրավականը:

Ներկայացված են այն կոմպետենցիաները, որոնց պետք է տիրապետի ուսուցիչը մասնագիտական պատրաստության, մանկավարժական գործունեության և վերապատրաստման արդյունքում:

Դիտարկված են ժամանակակից դպրոցում ուսուցչի մասնագիտական կայացմանը նպաստող գործոնները, մասնավորապես առարկայական մեթոդական մասնախմբերի գործունեությունը, որի հիմնական ուղղությունները պետք է լինեն՝

- մանկավարժական նոր տեխնոլոգիաների փորձաքննությունը և փորձարկումը, տեղեկատվական տարբեր միջոցների կիրառումը,
- սովորողների ուսումնախմբական գործունեության կազմակերպման ինովացիոն ձևերի ներդրումը,
- ուսուցիչների՝ միմյանց և աշակերտների հետ փոխգործակցության կազմակերպումն ինովացիոն գործունեության շրջանակներում,
- դպրոցում կրթական ծրագրերի, մեթոդական ապահովման կատարելագործումը,
- ուսուցիչների մանկավարժական վարպետության ձևավորումը, մասնագիտական զարգացումը և կայացումը,

- կրթության որակի ապահովումը:

Այս ուղղություններից ելնելով՝ մենք համարում ենք ուսուցիչների հետ տարվող աշխատանքների նախագծումը, դասալսումները, ցուցադրական դասերը, սեմինար պարապմունքները, մանկավարժական ընթերցումները, որոնք մենք համարում ենք առաջավոր փորձի տարածման լավագույն միջոցներ:

Երկրորդ ենթազխում՝ «Կարոցում սկսնակ ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման մեթոդական աշխատանքների բնութագիրը», դիտարկված են սկսնակ ուսուցիչների՝ մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներին հարմարվելու, ինքնիրացման, մասնագիտական զարգացման խնդիրները, որոնց ուղղությամբ էլ իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

- փորձառու ուսուցիչների մասնագիտական օգնություն,
- մանկավարժական խորհրդատվության կազմակերպում,
- առարկայական մեթոդական մասնախմբերի մեթոդական օգնություն,
- կառավարող սուբյեկտի կողմից ուսուցիչների ինքնակրթության խթանմանն ուղղված գործունեություն:

Ներկայացված են ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետության խթանման գործոնները՝

- գործոններ, որոնք կապված են աշխատանքի արտաքին պայմանների հետ,
- գործոններ, որոնք կապված են աշխատանքի բովանդակության հետ,
- աշխատավարձը,
- կոլեկտիվում միջանձնային հարաբերությունները,
- ղեկավարության կառավարման ոճը, վերահսկողության մակարդակը,
- աշխատատեղի հարմարավետությունը:

Մենք կարծում ենք, որ ուսուցչի գործունեության մասնագիտական արդյունավետության խթանիչներ են՝

- ուսուցչի կազմակերպչական և ստեղծագործական ընդունակությունների զարգացման մակարդակը,
- ինքնուրույնությունը,
- դպրոցում ստեղծագործական-կրթական միջավայրի առկայությունը,
- ուսուցչի կողմից առաջարկվող նորամտությունների արժևորումը և ներդրման հնարավորությունների ապահովումը,
- ուսուցչի աշխատանքի գնահատումը և նրա մասնագիտական աճի հնարավորությունների ապահովումը դպրոցի կառավարման սուբյեկտների կողմից:

Յիմնավորվում է, որ ուսուցչի մանկավարժական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական վարպետությամբ, որի ծավալումն սկսվում է բուհում և շարունակվում դպրոցում մանկավարժական բազմաձև գործունեության ընթացքում: Աներկբա է, որ ուսուցիչների մանկավարժական վարպետության կատարելագործման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական միջոցը դպրոցում կազմակերպվող աշխատանքներն են:

Նշվում է, որ ուսուցչի մասնագիտական կայացման և մանկավարժական գործունեության կատարելագործման գերակա ուղին առարկայական մեթոդական մասնախմբերի աշխատանքն է:

Մեթոդական մասնախմբերի խնդիրն է գործընկերների հետ փոխգործակցության միջոցով օգնել ուսուցչին՝ հաղթահարելու դժվարությունները, միջանձնային հարաբերություններում ծագած խնդիրները, մշակել ինքնակրթության ծրագիր, ապահովել մանկավարժական առաջավոր փորձի փոխանցումը:

Ելնելով վերը նշված մոտեցումներից և տեսական բացահայտումներից՝ մենք մշակել ենք ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվող մեթոդական աշխատանքների մոդելը և այդ աշխատանքների կառավարման կառուցվածքը:

Դիտարկված են ուսուցչի մանկավարժական գործունեության առանձնահատկությունները:

Երրորդ՝ «Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման կառավարման համակարգը» ենթագլխում դիտարկված է ուսուցիչների մասնագիտական գործունեության կատարելագործման ուղղությամբ տարվող կառավարչական գործունեությունը:

Ներկայացված են ուսուցչի մասնագիտական մանկավարժական գործունեության արդյունավետության՝ մեր կողմից մշակված չափանիշները:

Ուսուցչին ներկայացվող պահանջների շրջանակներում հիմնավորվում է, որ ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետությանը և կատարելագործմանը նպաստում են ինքնավերահսկման, ինքնավերլուծության կարողությունները:

Ներկայացված է մանկավարժական խնդիրների լուծման վերլուծության սխեման: Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման և դրա որակական չափանիշների վերաբերյալ ժամանակակից մոտեցումները մեզ հնարավորություն են տալիս առանձնացնելու այդ գործընթացի արդյունավետության հիմնական միջոցները՝ կառավարչական, տեխնոլոգիական և մեթոդական: Ներկայացված է մեր կողմից մշակված դպրոցում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման գործընթացի կառավարման համակարգը:

Հիմնավորված է, որ ուսուցչի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև նրա մանկավարժական հաղորդակցական կարողություններով, որոնք ուսուցիչը տիրապետում է իր մասնագիտական գործունեության, ինքնառեֆլեքսիայի ընթացքում:

Դիտարկված են մասնագիտական կոմպետենտության կառուցվածքային բաղադրիչները (կոմպետենցիաներ): Մենք մասնագիտական մանկավարժական կոմպետենտությունը սահմանում ենք որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստության մակարդակ, որն արտացոլում է այդ պատրաստության համապատասխանության աստիճանը մանկավարժական գործունեությանը և որոշակի չափով հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել սոցիալական, մշակութային և մասնագիտական հարափոփոխ իրավիճակներում:

Հենվելով տարբեր հետազոտողների կողմից ուսուցչի մասնագիտական գործունեության և նրա կառուցվածքային բաղադրիչների վերաբերյալ տրված բնութագրերի և սահմանումների վրա՝ կարծում ենք, որ ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետությունը կարող է բնութագրվել՝

- ըստ կոմպետենցիաների զարգացման մակարդակի,
- ըստ մասնագիտական պատրաստության մակարդակի,
- ըստ մանկավարժական մշակույթի ձևավորվածության մակարդակի /Ե.Վ.Բոնդարևսկայա/,
- ըստ մասնագիտության նկատմամբ անձնային դիրքորոշումների /Կ.Դուրայ-Նովիկովա/:

Ատենախոսության երկրորդ՝ «**Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման ժամանակակից տեխնոլոգիաների փորձարարական ստուգումը**» խորագրով գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման մշակված տեխնոլոգիաների հիմնավորումը**», նշվում է, որ ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման ժամանակակից տեխնոլոգիաներն ուղղված են նրա հոգեբանամանկավարժական գիտելիքների հարստացմանը և առարկայական պատրաստության կատարելագործմանը: Դա ենթադրում է մանկավարժական մտածողության զարգացում, մանկավարժական վարպետության կատարելագործում, մանկավարժական կարողությունների, հմտությունների (վերլուծման, կամխատեսման, մախագծման, ռեֆլեքսիայի, մոբիլիզացման, զարգացնող, կողմնորոշող, հաղորդակցական, պերցեպտիվ, կազմակերպչական) զարգացում:

Բացահայտված են դպրոցում սկսնակ ուսուցչի աշխատանքում առկա թերությունները: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ թերություններ առկա են ինչպես ուսուցչի գործունեության, այնպես էլ մասնագիտական պատրաստության և վարքի դրդապատճառների մեջ: Օրինակ՝ գործունեության ոլորտում դրսևորվող թերություններից են՝

- դասի կազմակերպման միօրինակությունը,
- աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում չցուցաբերելը,
- աշակերտների ակտիվությունը չխթանելը,
- մանկավարժական տակտի պակասը,
- իր մասնագիտության նկատմամբ հարգանքի պակասը,
- իր մասնագիտական գործունեության նկատմամբ ոչ բավականաչափ հետաքրքրությունը,
- ուսուցման գործընթացի կազմակերպման հոգեբանամանկավարժական պահանջներին չտիրապետելը,
- ուսուցման և դաստիարակության նորագույն տեխնոլոգիաներին չտիրապետելը, որի պատճառով նվազում է սովորողների հետաքրքրությունն առարկայի նկատմամբ,
- ուսուցչի ինքնատիրապետման և ինքնառեֆլեքսիայի ցածր մակարդակը,
- հումորի զգացման պակասը:

Այդ թերությունների վերացման համար մենք նախանշել ենք մի շարք ուղիներ՝

1. ուսուցչի ստեղծագործական գործունեության խթանում,

2. դասի կառուցվածքի համապատասխանեցումը սովորողների ուսումնառության նպատակներին,
3. սովորողների համար հարմարավետ կրթական միջավայրի ստեղծում,
4. ուսուցչի և աշակերտի համակառավարման ապահովում դասագործընթացում:

Մեր հետազոտությունների խնդիրների իրականացման և առաջադիր վարկածի հաստատման համար մենք մշակել ենք ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման երկու տեխնոլոգիա:

Ներկայացված են ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման նպատակով առաջարկվող երկու տեխնոլոգիաների՝ ուսուցչի մտամարզման և մասնագետ-խորհրդատուի հետ համագործակցության բնութագրերն ու կառուցվածքային բաղադրիչները:

Ուսուցչի մտամարզման տեխնոլոգիան ներառում է ուսուցչի մտամարզման տեսակները՝ քեյսեր /իրավիճակային խնդիրներ/, ուղեղային գրոհ, բանավեճ, ստեղծագործական նախագծերի մշակում, ուսուցման ռազմավարությունների մշակում, մասնագիտական զարգացման առաջադրանքներ, և մտամարզման փուլերը՝ ախտորոշում, իմացական ոլորտի տվյալների փաստագրում, գնահատում:

Ախտորոշման համար նախատեսվել է 100-միավորային սանդղակով թեստ, որտեղ 50 միավորը նախատեսված է մանկավարժական մասնագիտական գիտելիքների իմացության մակարդակը ստուգելու համար, իսկ 50-ը՝ մանկավարժական մտածողության, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու կարողությունների, մանկավարժական վարպետության ստուգմանը:

Գիտափորձի ընթացքում մեր կողմից մշակված թեստերի միջոցով նախնական ախտորոշման արդյունքում մենք բացահայտեցինք մանկավարժական մասնագիտական գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ինչպես նաև մանկավարժական վարպետության ցուցանիշները, որոնք դասակարգեցինք ըստ սահմանված մակարդակների:

Գիտափորձի ընթացքում պարզվեց, որ միջին մակարդակի ցուցանիշներում նույնպես տարբերակվածություն կա, որը մենք ներկայացրել ենք ենթամակարդակների տեսքով. միջին մակարդակը բաժանել ենք «ա», «բ», «գ» ենթամակարդակների:

Բարձր որակավորում ստացած ուսուցիչները որպես խորհրդատուներ մասնակցում են մյուս խմբերի հետ աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև նրանք հաղթահարում են մասնագետ-խորհրդատուի կոչում ստանալու առաջին աստիճանը:

Խմբավորումից հետո սկսվում է փաստագրման փուլը, երբ կանխատեսվում, մոդելավորվում, նախագծվում, ծրագրվում, պլանավորվում են աշխատանքները միջին և ցածր մակարդակի որակավորում ստացած խմբերի հետ. առաջադրվում են հարցաշարեր, թեստեր, խնդիր-իրավիճակներ, որոնք պատասխաններն անպայման հանգում են բանավեճի, բացատրվում, մեկնաբանվում /ինչու, ինչի համար, ինչ մանկավարժական նկատառումով/, քննարկվում են, մտահանգում ու ընդգծում այն կարևոր գաղափարը, որը մանկավարժորեն արդարացված է: Ամփոփումը, եզրահանգումը կատարում է մտամարզողը կամ բարձր, օպտիմալ որակավորում ստացած ուսուցիչներից որևէ մեկը: Փաստագրման փուլը

ավարտելով՝ անցնում են զնահատման փուլին: Այս փուլում ի մի են բերվում արձանագրված զնահատականները, որոնք արձանագրված են անհատական քարտերում, և միջինով զնահատում:

Մասնագետ-խորհրդատուն կցվում է ուսուցչին մեկ ամիս նրան մեթոդական և մասնագիտական օգնություն ցուցաբերելու համար՝ նպաստելով տեսական գիտելիքների պրակտիկ յուրացմանը: Մասնագետ-խորհրդատուն ընտրվում է հատուկ ստուգումից, թեստավորումից հետո /հավելված 1-ում թեստ 3/: Մեր կարծիքով՝ մասնագետ-խորհրդատուին ներկայացվող թեստերի առաջադրանքների բովանդակության մեջ պետք է ներառվեն կրթական բարեփոխումներում ընդգրկված նորարարությունների և նորամուծությունների մասին հարցեր, որոնց միջոցով բացահայտվում են մասնագետի իմացությունը և դրանց մասին տեղեկացվածությունը:

Գործընթացի այդ հատվածը համարվում է ախտորոշման փուլ, որից հետո որոշակիացվում են մասնագետի՝ խորհրդատվական գործունեությամբ զբաղվելու թույլտվության մակարդակները:

Մասնագետ-խորհրդատուի համագործակցության տեխնոլոգիայի կիրառման ընթացքում մասնագետ-խորհրդատուն ոչ թե հրապարակավ դիտողություններ և ուղղումներ է անում՝ աշակերտների ներկայությամբ հեղինակագրելով ուսուցչին, այլ նախօրոք պլանավորելով համատեղ գործունեությունը՝ անցկացնում են դասը, ապա դասից հետո վերլուծում կատարած աշխատանքը:

Յուրաքանչյուր մասնագետ-խորհրդատու պետք է ունենա յուրաքանչյուր ուսուցչի համար հատկացված թղթապանակ, որը պետք է պարունակի օրվա վերլուծական հարցաթերթիկներ, ռուբրիկներ /հավելված 1-ում հարցաթերթիկ 1, 2, ռուբրիկ 1/, դիտման ընթացքում արձանագրված փաստեր՝ ուսուցչի հաջողություններն ու անհաջողությունները, աստիճանական առաջընթացը արձանագրելու համար:

Մասնագետ-խորհրդատուն պետք է օգնի ուսուցչին՝ հաղթահարելու նորարարության ներդնման գործընթացում անվստահությունը, լարվածությունը. նա պետք է աջակցի ուսուցչին՝ հաղթահարելու խոչընդոտները /գծապատկեր թիվ 3/: Այս տեխնոլոգիայի արդյունքում ուսուցիչը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում լիարժեքորեն կտեղեկանա յուրաքանչյուր նորարարության իրագործմանը և կարժևորի ստացած արդյունքները:

Երկրորդ ենթաբաժինում՝ «Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման ժամանակակից տեխնոլոգիաների փորձարարական ստուգումը և արդյունքների վերլուծությունը», ներկայացված են ախտորոշիչ թեստերի միջոցով իրականացված փորձարարական աշխատանքների արդյունքները:

Վանաձոր քաղաքի թիվ 5 միջն. դպրոցում առաջադրվող տեխնոլոգիաների ներդրման գիտափորձ ենք իրականացրել 2008-2009 ուստարվա 2-րդ կիսամյակում: Նախ մի խումբ ուսուցիչների հետ փորձարկել ենք ուսուցչի մտամարզման տեխնոլոգիան: Նախնական ախտորոշման նպատակով առաջադրել ենք թեստ, ապա ըստ որակավորման կազմվել են խմբեր:

Ախտորոշման նպատակով թեստի արդյունքներն են.

1	2	3
Բարձր, օպտիմալ մակարդակ	միջին, բավարար մակարդակ	ցածր մակարդակ
86-100 միավոր	40-85 միավոր	1-39 միավոր
88 միավոր	82, 81, 79, 78, 77, 76, 76, 75, 74, 72, 69, 67, 66, 66, 63, 61, 60, 60, 59, 54, 52	0

Մասնագետ-խորհրդատուի համագործակցության տեխնոլոգիան իրականացվեց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհու հետ, ով գտնվեց բարձր, օպտիմալ մակարդակում (մասնագետ-խորհրդատու համագործակցության տեխնոլոգիայի առաջին աստիճան): Ուսուցչուհուն առաջադրվեց թեստ՝ բովանդակային հարցերում ընդգրկելով կրթական բարեփոխումների նորարարությունները, որոնք ճշտում են մասնագետի իմացությունը, պատկերացումներն այդ նորույթների մասին:

Հատուկ ստուգումից հետո նա համարվեց մասնագետ-խորհրդատու և կցվեց իր աշխատանքային ընկերոջը մոտ մեկ ամիս նրան մեթոդական և մասնագիտական օգնություն ցուցաբերելու համար՝ տեսականը պրակտիկորեն ցուցադրելով: Որպես մասնագետ-խորհրդատու՝ նա հատուկ թղթապանակում հավաստում էր օրվա վերլուծական հարցաթերթիկները, դիտման ընթացքում արձանագրված փաստերը՝ ուսուցչի հաջողություններն ու անհաջողությունները, աստիճանական առաջընթացը փաստելու համար:

Ներկայացված է մասնագետ-խորհրդատուի և ուսուցչի համատեղ մախագծված և մոդելավորված դասագործընթացի բովանդակությունը:

Փորձարկվող ուսուցչի մոտ իրականացված դասալսման արդյունքում արձանագրվեց մասնագիտական գիտելիքների և նորանվտությունների նկատելի աճ:

Ուսուցչի մտամարզման տեխնոլոգիայի ընթացիկ փաստագրման փուլում բարձր, օպտիմալ մակարդակում գտնվող ուսուցչի օգնությամբ աշխատեցինք խմբերում, թեստերն ու հարցաշարերը միասին քննարկեցինք, պարզաբանեցինք, մեկնաբանեցինք, մանկավարժորեն արդարացված եզրահանգման եկանք, ինչպես նաև դերային իրավիճակներ ստեղծեցինք ասվածը համոզիչ դարձնելու նպատակով: Վերջում աշխատանքներն ամփոփվեցին և արժևորվեցին:

Փաստագրման փուլն ավարտելուց հետո իրականացվեց գնահատման փուլը: Այս փուլում ի մի բերվեցին արձանագրված գնահատականները, որոնք և միջինացվեցին: Վերջնական գնահատականի համար առաջադրվեցին ստուգողական թեստ և մանկավարժական խնդիր-իրավիճակ:


Ըստ փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծության՝ փորձառու ուսուցիչների հետ տարվող փորձարարական աշխատանքները, փոխադարձ դասալսումները, բաց դասերի արդյունքները, ղեկավարության կարծիքը հաստատեցին, որ կիրառվող տեխնոլոգիաներն արդյունավետ են:

Առաջադրվող տեխնոլոգիաների ներդրման գիտափորձեր ենք իրականացրել 2008-2009 ուստարվա 1-ին կիսամյակում և 2009-2010 մարզի Լեռնանցքի միջնակարգ դպրոցում, 2009-2010 ուստարվա 1-ին կիսամյակում՝


Վանաձոր քաղաքի թիվ 24 միջն. դպրոցում, 2009-2010 ուստարվա 2-րդ կիսամյակում՝ Լոռու մարզի Գարգառի միջնակարգ դպրոցում, 2010-2011 ուստարվա 1-ին կիսամյակում՝ Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոցում, 2010-2011 ուստարվա 2-րդ կիսամյակում՝ Վանաձոր քաղաքի թիվ 18 միջնակարգ դպրոցում:

Ուսուցիչների նախնական փստորոշման արդյունքները ներկայացված են դիագրամայի տեսքով, որտեղ.

- 1-ը Լեռնանցքի միջնակարգ դպրոցի արդյունքներն են,
 - 2-ը՝ Վանաձորի թիվ 5 միջն. դպրոցի,
 - 3-ը՝ Վանաձորի թիվ 24 միջն.դպրոցի,
 - 4-ը՝ Գարգառի միջնակարգ դպրոցի,
 - 5-ը Դեբեդի միջնակարգ դպրոցի,
 - 6-ը Վանաձորի թիվ 18 միջն. դպրոցի,
- առաջին սյունակը բարձր, օպտիմալ մակարդակն է,
 երկրորդը՝ միջին, բավարար մակարդակը,
 երրորդը՝ ցածր մակարդակը,
 յուրաքանչյուր անձի հատկացվել է 5 միավոր.



Առաջադրվող տեխնոլոգիաների ներդրման գիտափորձերի վերջնական գնահատման փուլերի արդյունքների վերլուծության արդյունքում պատկերը հետևյալն է.



Գիտափորձի ավարտին հարցումների միջոցով իրականացվեց մշտադիտարկում մեր կողմից մշակված տեխնոլոգիայի արդյունավետությունը ստուգելու համար: Արդյունքները ներկայացված են համապատասխան գլխում և հավելվածներում: Այսպիսով փորձարարական աշխատանքների արդյունքների հիման վրա հաստատվեց մեր կողմից մշակված ուսուցչի մասնագիտական կատարելագործման տեխնոլոգիաների արդյունավետությունը:

Կատարած տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունը, դրանց քննարկումը և ընդհանրացումը հնարավորություն ընձեռեցին կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Կրթական բարեփոխումների արդի փուլում հատուկ կարևորություն է ստանում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործումը, որը հանդես է գալիս որպես անընդմեջ արժեքաիմաստային ինքնորոշում, մասնագիտական ինքնիրացում, որոնցով պայմանավորված է կրթության որակի բարձրացումը և հանրակրթական դպրոցներում իրականացվող ինովացիաների արդյունավետությունը:
2. Մեր հետազոտության առանցքն են կազմում հանրակրթական դպրոցում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման կառավարման առանձնահատկությունների վերլուծությունը: Մենք ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման հիմնական առանձնահատկություններն ենք համարում՝
 - ուսուցիչը միևնույն ժամանակ համարվում է կառավարման օբյեկտ և սուբյեկտ:
 - կառավարման սուբյեկտների համագործակցությունը, որի արդյունքում կառավարումը փոխակերպվում է համակառավարման,
 - գործունեության կազմակերպման նախագծային-ծրագրային և կազմակերպական-տեխնոլոգիական բնույթը:
3. Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման տեսական և փորձարարական հետազոտության ընթացքում հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից բացահայտվել, վերլուծվել և համակարգվել են ուսուցչի մասնագիտական կայացման խնդիրները և մանկավարժական գործունեության կատարելագործման միջոցները, ձևերը, մեթոդները, փուլերը, չափանիշները, արդյունքները:
4. Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործումը նպատակաուղղված է նրա ռեֆլեքսիայի, ստեղծագործական մտածողության, մանկավարժական մշակույթի, մանկավարժական կոմպետենցիաների ձևավորմանը և կրթական գործընթացի որակի բարձրացմանը:
5. Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետությունը ապահովվում է ինչպես բուհում մասնագիտական պատրաստության, այնպես էլ մանկավարժական գործունեության ընթացքում մանկավարժական մտածողության և մանկավարժական էթիկայի ձևավորման միջոցով, մանկավարժական գիտելիքների, մանկավարժական առաջավոր փորձի յուրացման ճանապարհով, մասնագիտական կոմպետեն-

ցիաների զարգացման, մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման արդյունքում:

6. Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն մասնագիտորեն մշանակալի առանձնահատկություններով, այլև դպրոցի կառավարման սուբյեկտների ստեղծագործական ակտիվություն, հաղորդակցական գործունեություն, փոխգործակցության, ինքնառեֆլեքսիայի, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողություններով:
7. Հիմնավորվել են ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման ձևերը.
 - առարկայական մեթոդական մասնախմբերի գործունեությունը,
 - կրթական նոր տեխնոլոգիաների և ռազմավարության մշակումը, փորձարկումը,
 - բաց դասերը,
 - մանկավարժական ստեղծագործ աշխատանքը,
 - գիտագործնական սեմինարները,
 - շնորհանդեսները:

8. Հանրակրթական դպրոցում ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետությունը կարող են ապահովել մեր կողմից մշակված տեխնոլոգիաները.

- **ուսուցչի մտամարզումը**, որը ներառում է մտամարզման փուլերը և մտամարզման տեսակները՝ քեյսեր ի (իրավիճակային խնդիրներ, ուղեղային գրոհ, բանավեճ, ստեղծագործական նախագծեր), մշակում, ուսուցման ռազմավարությունների մշակում, մասնագիտական զարգացման առաջադրանքներ, ինչպես նաև թեստերի, հարցաշարերի, տեխնոլոգիական քարտերի, այդ գործընթացի տեխնոլոգիական և մանկավարժական խնդիր-իրավիճակներում ճիշտ որոշումներ կայացնելու կոմպետենցիաների մշակումը, մանկավարժական մտածողության զարգացման կառավարումը,
- **մասնագետ-խորհրդատուի** հետ համագործակցությունը:

Փորձարարական հետազոտության դրական արդյունքները վկայում են, որ ուսուցչի մասնագիտական կատարելագործման՝ մեր կողմից մշակած տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է մասնագիտական գիտելիքների համակարգմանն ու հարստացմանը, մանկավարժական իրավիճակներն ու երևույթները վերլուծելու, մանկավարժական տեխնիկայի, գործնական կարողությունների զարգացմանը և իմիջի ձևավորմանը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ուսումնական տարբեր հաստատություններում դասավանդող ուսուցիչների մասնագիտական գործունեության կատարելագործման իրականացման գործում:

Ատենախոսության ընդհանուր եզրակացությունները հաստատում են առաջադիր վարկածի ճշմարտացիությունը և թույլ են տալիս ձևակերպել տեսական դրույթներ, որոնք հարստացնում են ելակետային տեսական դիրքորոշումները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Ուսուցման սուբյեկտի ճանաչողության հիմնախնդիրը մանկավարժական գործունեության արդյունավետության հայեցակետից, «Վասն արդարութեան», Լույս 3/(53)2005, էջ 58-60
2. Ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը դեռահասների բացասական հակումներից ձերբազատելու խնդրում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես հասարակական գիտություններ 1/ (13)2007, էջ105-107
3. Ուսուցիչը կրթական բարեփոխումների սուբյեկտ, Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 2009, էջ 43-48
4. Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման ժամանակակից տեխնոլոգիաները, Գիտական հոդվածների ժողովածու, «Մանկավարժություն և մեթոդիկա», Վանաձոր-2010, էջ 137-143
5. Որոշ ժամանակակից տեխնոլոգիաներ որպես հայկական կրթօջախների ուսուցման օպտիմալացման միջոցներ, Գիտաժողովի նյութեր, /հանրապետական գիտաժողով՝ նվիրված Ղ. Աղայանի 170-ամյակին/ Վանաձոր-2010, էջ 140-147

БАГ ДАСАРЯН ЛИЛИТ ГАГИКОВНА

СОВРЕМЕННЫЕ ТЕХНОЛОГИИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ УЧИТЕЛЯ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогической наук по специальности 13.00.01.- “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 7-го ноября 2013 года в 14.00 на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 375010, Ереван, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы: На современном этапе все более востребованным становится соединение усилий специалистов из разных областей для решения проблем взаимосвязи теории и практики образования. Формирование новой парадигмы образования, изменение целей и задач предполагают вхождение личности в социальный мир, ее конкурентоспособность и активную профессиональную жизнь. Вышеперечисленное предъявляет новые требования к педагогам: владеть профессиональными коммуникативными и рефлексивными компетенциями, проявлять творческий подход к собственной профессиональной деятельности. Таким образом, наравне с модернизацией системы образования необходимо также повышать качество профессионального образования учителей. Перед учителями стоит непростая задача – адаптироваться нововведениям и процессам модернизации и проявлять творческий подход к учебно-воспитательному процессу, в соответствии с потребностями времени и общества.

Требования к профессиональным качествам учителя делают необходимым усовершенствование содержания и технологий профессиональной практики в педагогическом вузе, качественные изменения в организации его деятельности в школе, в частности в структуре психолого-педагогического и научно-методического блоков, обеспечение условий для самообразования, саморазвития. В этом контексте важное значение имеет профессиональное усовершенствование учителя.

Цель исследования: теоретически обосновать и разработать педагогические технологии, способствующие эффективной реализации педагогической деятельности учителя.

Задачи исследования:

1. Анализировать проблему исследования, определить степень ее разработанности в педагогической теории и реальной образовательной практике.
2. Выявить существующие ошибки и недочеты в процессе совершенствования профессиональной деятельности учителя.
3. Уточнить сущность и критерии совершенствования профессиональной деятельности учителя.

4. Разработать технологии совершенствования профессиональной деятельности учителя.
5. Экспериментально проверить эффективность технологий совершенствования профессиональной деятельности учителя.
6. Разработать методические рекомендации с целью повышения эффективности процесса переподготовки и профессионального совершенствования деятельности учителя.

Научная новизна исследования:

1. Обоснованы современные требования к процессу совершенствования профессиональной деятельности учителя в системе внутришкольного управления.
2. Выявлены факторы, средства и виды, способствующие совершенствованию профессиональной деятельности учителя в школе.
3. Разработаны технологии, которые включают виды, средства и алгоритм развития умственных действий учителя и взаимодействие с консультантом-профессионалом, технологические требования, способствующие повышению профессионального качества и совершенствованию деятельности учителя.
4. Разработаны тесты, задачи-ситуации, которые могут быть применены в процессе совершенствования профессиональной деятельности учителя в школе.

Теоретическая значимость исследования.

- проведен многофакторный психолого-педагогический анализ проблемы исследования.
- расширены научно-теоретические представления о технологиях, видах, содержании профессионального становления учителя.
- теоретически обоснован технологический комплекс совершенствования профессиональной педагогической деятельности учителя в школе.
- в педагогической теории всесторонне рассмотрена проблема профессионального развития и совершенствования педагогической деятельности учителя.
- свое дальнейшее обоснование получила проблема профессионального развития и совершенствования педагогической деятельности учителя.

Практическая значимость исследования обусловлена.

- возможностью применения полученных результатов в школах и в повышении квалификации и переподготовки работников образования.
- внедрением разработанных тестов, задач-ситуаций, практических заданий в деле совершенствования профессиональной деятельности учителя.

Апробация исследования проведена на кафедре общей педагогики Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, на кафедре педагогики Ванадзорского педагогического института им. О. Туманяна, Национальном институте образования РА, опубликованных статьях.

Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка литературы в количестве 131 страниц, приложений.

UP-TO-DATE TECHNOLOGIES USED FOR IMPROVING A TEACHER'S PROFESSIONAL ACTIVITY

The defence of the dissertation will take place at the 020 'Pedagogy' Specialised Board Session of the Supreme Certifying Commission on November 7, 2013, at 2:00 p.m., at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: Tigran Mets Str. 17, Yerevan 375010.

The dissertation is stored at the library of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

The abstract has been dispatched on October 7, 2013.

The actuality of the research:

Nowadays it becomes significant to consolidate scientists' efforts, representing different fields of science, for tackling complex issues in educational theory and practice. Accordingly, it is important that those who play a role in education management have a clear view of the peculiarities and technology of teaching their subject, and make decisions about their role in the educational process.

The development of a new educational paradigm and upgrading of goals and problems ensure an individual's socialization, social competitiveness and active social life, which require that pedagogues develop communication competences and an ability to take a creative approach to their professional activity. This means that alongside with educational reforms, the improvement of the quality of a teacher's education is prioritized. It becomes necessary that a teacher should adapt to innovations and accordingly improve the teaching process to meet the demands of time and of the educational needs of the society. Such requirements made to teacher's professionalism suggest upgrading the content of professional practice and technologies at pedagogical institutes, making qualitative changes of the psychological-pedagogical and scientific-methodological pattern of their activity at schools, outlining plans for self-education and self-development, and creating conditions for their implementation.

This research aims to conceptualize and develop pedagogical technologies contributing to the improvement of a teacher's professional activity.

The main **objectives** of the research:

1. Analyze the research questions and the degree of their relevance to the pedagogical theory and contemporary education,
2. Explore flaws in the process of the improvement of a teacher's professional activity,
3. Define the essence and criteria for a teacher's professional activity,
4. Develop pedagogical technologies for the improvement of a teacher's professional activity,
5. Empirically assess the efficiency of the technologies aimed at improving a teacher's professional activity,

6. Develop methodological recommendations for teachers' training and enhancement of the efficiency of the process of their professional development.

The scientific **novelty** of the research:

- Factors, means and ways have been explored that contribute to the development of a teacher's professional activity at schools,
- New technologies, rules, models and graphics have been developed for improving a teacher's pedagogical activity and enhancing the quality of a teacher's professionalism,
- Tests and situations have been developed that can be used at schools during a teacher's professional realization and improvement of pedagogical activity.

Theoretical value of the research:

- The research questions have undergone a thorough psychological-pedagogical analysis,
- An attempt has been made to expand perspectives on the ways, content and technologies of professional development,
- The technological complex of the improvement of a teacher's pedagogical activity has been theoretically substantiated,
- The problem of a teacher's professional development and enhancement of the quality of pedagogical activity have been conceptualized.

Practical value of the research is determined by:

- Putting the results of the research in practice at secondary schools and during teacher training courses,
- Practically applying tests and problem-situations developed in the process of a teacher's professional realization and pedagogical activity.

The Chair of General Pedagogy at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, the Chair of Pedagogy at the Pedagogical Institute after H. Tumanyan in Vanadzor, the National Institute of Education and several schools served as research sites for the study. Some of the results of the study have been published in journals.

The dissertation is comprised of an introduction, two chapters, conclusions, bibliography and appendices.



